# ՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՐԻՔՆԵՐԻ ՀԱՄԱՐ ՈՐԱԿԻ ՏԵԽՆԻԿԱԿԱՆ ՀՍԿՈՂՈՒԹՅԱՆ ԽՈՐՀՐԴԱՏՎԱԿԱՆ ԾԱՌԱՅՈՒԹՅԱՆ ՄԱՏՈՒՑՄԱՆ ՊԵՏԱԿԱՆ ԳՆՄԱՆ ՊԱՅՄԱՆԱԳԻՐ
# N ՀՀԱՄ-ՀԲՄԽԾՁԲ-2026/1

ք.Արտաշատ «07» մարտի 2026 թ.

ՀՀ Արարատի մարզպետի աշխատակազմը, ի դեմս ՀՀ Արարատի մարզպետի աշխատակազմի գլխավոր քարտուղար՝ Արթուր Մկրտչյանի, որը գործում է ՀՀ Արարատի մարզպետի աշխատակազմի կանոնադրության հիման վրա (այսուհետ՝ Պատվիրատու), մի կողմից, և Ա/Ձ «ԱՐՏԱԿ ՄԱՐՏԻՐՈՍՅԱՆ» ին, ի դեմս տնօրեն Ա.Մարտիրոսյանի, որը գործում է ընկերության կանոնադրության հիման վրա (այսուհետ՝ Կատարող), մյուս կողմից, կնքեցին սույն պայմանագիրը հետևյալի մասին:

## 1. ՊԱՅՄԱՆԱԳՐԻ ԱՌԱՐԿԱՆ

1.1 Պատվիրատուն հանձնարարում է, իսկ Կատարողը ստանձնում է **ՀՀ Արարատի մարզի Վեդի համայնքի Եղեգնավան բնակավայրի մանկապարտեզի կառուցման» շինարարական աշխատանքների որակի տեխնիկական հսկողության խորհրդատվական ծառայության ձեռքբերման** մատուցման պարտավորությունը (այսուհետ՝ ծառայություն)՝ համաձայն սույն պայմանագրի (այսուհետ՝ պայմանագիր) անբաժանելի մասը կազմող N 1 հավելվածով սահմանված Տեխնիկական բնութագիր-գնման ժամանակացույցի պահանջների:

1.2 Ծառայությունը մատուցվում է քաղաքաշինական նորմատիվատեխնիկական և հաստատված նախագծանախահաշվային փաստաթղթերին և պայմանագրի N 1 հավելվածով սահմանված Տեխնիկական բնութագիր-գնման ժամանակացույցին համապատասխան և սահմանված ժամկետներով:

## 2. ԿՈՂՄԵՐԻ ԻՐԱՎՈՒՆՔՆԵՐԸ ԵՎ ՊԱՐՏԱԿԱՆՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ

### 2.1 Պատվիրատուն իրավունք ունի՝

2.1.1 Ցանկացած ժամանակ ստուգել Կատարողի կողմից մատուցվող ծառայության ընթացքը և որակը՝ առանց միջամտելու Կատարողի գործունեությանը.

2.1.2 Եթե մատուցվել է պայմանագրի N 1 հավելվածում նշված Տեխնիկական բնութագիր-գնման ժամանակացույցին չհամապատասխանող ծառայություն.

ա) ) Չընդունել ծառայությունը և սահմանել ողջամիտ ժամկետ ոչ պատշաճ ծառայությունը պայմանագրով նախատեսված պահանջներին համապատասխան (անհատույց) պատշաճ մատուցելու և պահանջել Կատարողից վճարելու պայմանագրի 5.2 կետով նախատեսված տուգանքն ու 5.3 կետով նախատեսված տույժը.

բ) Հրաժարվել պայմանագիրը կատարելուց և պահանջել վերադարձնելու ծառայության համար վճարված գումարը և պահանջել Կատարողից վճարելու պայմանագրի 5.2 կետով նախատեսված տուգանքը.

2.1.3 Միակողմանի լուծել պայմանագիրը, եթե Կատարողն էականորեն խախտել է պայմանագիրը: Կատարողի կողմից պայմանագիրը խախտելն էական է համարվում, եթե՝

ա) մատուցված ծառայությունը չի համապատասխանում պայմանագրի N 1 հավելվածով սահմանված պահանջներին,

բ) խախտվել է ծառայության մատուցման ժամկետը:

### 2.2 Պատվիրատուն պարտավոր է՝

2.2.1 Քննարկել և ընդունել Տեխնիկական բնութագիր-գնման ժամանակացույցին համապատասխան մատուցված ծառայության արդյունքը, իսկ ծառայության արդյունքում թերություններ հայտնաբերելու դեպքերում՝ այդ մասին անհապաղ գրավոր հայտնել Կատարողին:

2.2.2 Ծառայության արդյունքն ընդունելու դեպքում Կատարողին վճարել վերջինիս կողմից մատուցված պատշաճ ծառայության դիմաց վճարման ենթակա գումարները, իսկ վճարման ժամկետի խախտման դեպքում՝ նաև պայմանագրի 5.5 կետով նախատեսված տույժը:

### 2.3 Կատարողն իրավունք ունի՝

2.3.1 Պատվիրատուից պահանջել վճարելու պատշաճ մատուցված ծառայության դիմաց վճարման ենթակա գումարները, իսկ Պատվիրատուի կողմից պայմանագրի 4.2 կետում նշված վճարման ժամկետի խախտման դեպքում նաև պայմանագրի 5.5 կետով նախատեսված տույժը:

### 2.4 Կատարողը պարտավոր է՝

2.4.1 Պայմանագրի N 1 հավելվածով սահմանված պայմաններով ապահովել ծառայության պատշաճ մատուցումը՝ ղեկավարվելով գործող օրենսդրությամբ:

2.4.2 Պայմանագրով նախատեսված դեպքերում վճարել պայմանագրի 5.2 և 5.3 կետերով նախատեսված տույժը և տուգանքը:

2.4.3 Պայմանագրի կատարման ապահովման գործողության ընթացքում լուծարման կամ սնանկացման գործընթաց սկսելու դեպքում դրա մասին նախապես գրավոր տեղեկացնել Պատվիրատուին:

2.4.4 Եթե պայմանագրի N 6 հավելվածով (Աղյուսակներ N 1 և N 2) կապալի օբյեկտի և դրա առանձին մասերի համար սահմանված երաշխիքային ժամկետների ընթացքում ի հայտ են եկել թերություններ, ապա տեխնիկական հսկողություն իրականացնող անձը պայմանագրով նախատեսված իր պարտավորությունները չկատարելու կամ ոչ պատշաճ կատարելու համար պատվիրատուին վճարում է տուգանք՝ հայտնաբերված թերության վերացման համար կապալառուի կամ պատվիրատուի կողմից իրականացված փաստացի ծախսերի չափով:

2.4.5 Ծառայության մատուցման յուրաքանչյուր հաշվետվության մեջ պարտադիր պետք է նշված լինի՝

- աշխատանքների կատարման օրացուցային գրաֆիկից շեղումների,
- նախագծանախահաշվային փաստաթղթերում առկա բացթողումների,
- կապալառուի կողմից ոչ իր մեղքով աշխատանքների կատարման անհնարինության հստակ օրերի վերաբերյալ տեղեկատվություն:

2.4.6 Շինարարական աշխատանքներն ավարտվելուց հետո եռօրյա ժամկետում գրավոր տեղեկացնել Պատվիրատուին աշխատանքների ավարտի օրվա վերաբերյալ:

## 3. ԾԱՌԱՅՈՒԹՅԱՆ ՀԱՆՁՆՄԱՆ ԵՎ ԸՆԴՈՒՆՄԱՆ ԿԱՐԳԸ

3.1 Մատուցված ծառայությունն ընդունվում է Պատվիրատուի և Կատարողի միջև հանձնման-ընդունման արձանագրության ստորագրմամբ: Ծառայությունը Պատվիրատուին հանձնելու փաստը ֆիքսվում է Պատվիրատուի և Կատարողի միջև երկկողմ հաստատված փաստաթղթով՝ նշելով փաստաթղթի կազմման ամսաթիվը:

**Ընդ որում պայմանագրի շրջանակներում մատուցված և Պատվիրատուին ներկայացված ծառայության արդյունքի ընդունումն իրականացվում է, եթե Կատարողը ամբողջությամբ՝ ամենօրյա ռեժիմով ապահովել է քաղաքաշինական նորմատիվատեխնիկական և հաստատված նախագծանախահաշվային փաստաթղթերով սահմանված պահանջները այդ թվում շինարարական հրապարակի պատշաճ կազմակերպմանը, կահավորմանը, տեխնիկական անվտանգության, սանիտարահիգիենիկ և բնապահպանական (այդ թվում կլիմայի փոփոխության հետ հարմարվողականության միջոցառումները) նորմերը և Պատվիրատուին ներկայացրել գրավոր հավաստում՝ ամենօրյա ռեժիմով կապալառուի կողմից շինարարական հրապարակի պատշաճ կազմակերպման, կահավորման և տեխնիկական անվտանգության, սանիտարահիգիենիկ և բնապահպանական (այդ թվում կլիմայի փոփոխության հետ հարմարվողականության միջոցառումները) նորմերը պահպանած կամ չպահպանված լինելու վերաբերյալ: Ընդ որում հավաստման մեջ մանրամասն ներկայացվում են կանոնները և/կամ նորմերը չպահպանելու փաստը հավաստող հիմքերը:**

Մինչև պայմանագրով ծառայության մատուցման համար նախատեսված օրը ներառյալ Կատարողը Պատվիրատուին է տրամադրում իր կողմից ստորագրված՝ ծառայությունը Պատվիրատուին հանձնելու փաստը ֆիքսող փաստաթուղթը (հավելված N 3.1), իսկ էլեկտրոնային գնումների armeps համակարգի միջոցով (գործողության իրականացման ձեռնարկը տեղադրված է www.procurement.am հասցեով գործող կայքի «Էլեկտրոնային գնումներ» բաժնում)՝ նաև հանձնման-ընդունման արձանագրությունը (հավելված N 3): Ընդ որում Կատարողը հանձնման-ընդունման արձանագրությունը չի կնքում, հաստատում է էլեկտրոնային ստորագրությամբ՝ լրացնելով միայն այն սյունակները, որոնք վերաբերում են իր տվյալներին (լրացման կարգը տեղադրված է www.procurement.am հասցեով գործող կայքի «Օրենսդրություն» բաժնի «Ֆինանսների նախարարի հրամաններ» ենթաբաժնում):

3.2 Եթե մատուցված ծառայությունը համապատասխանում է պայմանագրի պայմաններին, Պատվիրատուն պայմանագրի 3.1 կետում նշված փաստաթղթերը ստանալու օրվան հաջորդող աշխատանքային օրվանից հաշված 20 օրացուցային օրվա ընթացքում ստորագրում և էլեկտրոնային գնումների armeps համակարգի միջոցով Կատարողին է տրամադրում իր կողմից ստորագրված հանձնման-ընդունման արձանագրությունը և դրա ստորագրման համար հիմք հանդիսացած դրական եզրակացությունը:

3.3 Եթե մատուցված ծառայությունը կամ դրա մի մասը չի համապատասխանում պայմանագրի պայմաններին, ապա Պատվիրատուն չի ստորագրում հանձնման-ընդունման արձանագրությունը և պայմանագրի 3.2 կետում նշված ժամկետում էլեկտրոնային գնումների armeps համակարգի միջոցով Կատարողին հետ է վերադարձնում հանձնման-ընդունման արձանագրությունը և դրա չստորագրման համար հիմք հանդիսացած բացասական եզրակացությունը: Սույն կետի կիրառման դեպքում Պատվիրատուն ձեռնարկում է նման իրավիճակի համար պայմանագրով նախատեսված միջոցները և Կատարողի նկատմամբ կիրառում է պայմանագրով նախատեսված պատասխանատվության միջոցներ:

3.4 Եթե պայմանագրի 3.2 կետով սահմանված ժամկետում Պատվիրատուն չի ընդունում մատուցված ծառայությունը կամ չի մերժում դրա ընդունումը, ապա մատուցված ծառայությունը համարվում է ընդունված և պայմանագրի 3.2 կետով սահմանված վերջնաժամկետին հաջորդող աշխատանքային օրը Պատվիրատուն էլեկտրոնային գնումների համակարգի միջոցով Կատարողին է տրամադրում իր կողմից ստորագրված հանձնման-ընդունման արձանագրությունը:

## 4. ՊԱՅՄԱՆԱԳՐԻ ԳԻՆԸ

4.1. Սույն պայմանագրով Կատարողի մատուցման ենթակա ծառայության գինը կազմում է 1 100 000 (մեկ միլիոն մեկ հարյուր հազար ) ՀՀ դրամ:

4.1.1[1]

4.2 Պատվիրատուն իրեն մատուցած ծառայության դիմաց վճարում է պայմանագրի 3-րդ բաժնով նախատեսված կարգով ընդունելու դեպքում՝ ՀՀ դրամով անկանխիկ՝ դրամական միջոցները Կատարողի պայմանագրում նշված հաշվարկային հաշվին փոխանցելու միջոցով: Դրամական միջոցների փոխանցումը կատարվում է հանձման-ընդունման արձանագրության հիման վրա՝ Կապալառուի կողմից ներկայացված և Պատվիրատուի կողմից հաստատված կատարողական ակտերի համամասնությամբ՝ պայմանագրի վճարման ժամանակացույցով (հավելված N 2) նախատեսված ամիսներին, բայց ոչ ուշ, քան մինչև տվյալ տարվա նախավերջին աշխատանքային օրը:

Ընդ որում վճարում կատարելու նպատակով հանձնման-ընդունման արձանագրությունն ստորագրվելու օրվանից հետո 3 աշխատանքային օրվա ընթացքում պատվիրատուն վճարման հանձնարարագիրը և հանձնման-ընդունման արձանագրության պատճենը մուտքագրում է լիազորված մարմնի գանձապետական համակարգ, իսկ սահմանված կարգի համաձայն ներկայացված փաստաթղթերի հիման վրա լիազորված մարմինը տվյալ վճարումը կատարում է հանձնման-ընդունման արձանագրությունը գանձապետական համակարգ մուտքագրված լինելու դեպքում՝ սույն պայմանագրի վճարման ժամանակացույցով սահմանված ժամկետներում, հինգ աշխատանքային օրվա ընթացքում:

## 5. ԿՈՂՄԵՐԻ ՊԱՏԱՍԽԱՆԱՏՎՈՒԹՅՈՒՆԸ

5.1 Կատարողը պատասխանատվություն է կրում ծառայության մատուցման՝ պայմանագրի պահանջների պահպանման համար:

5.2 Պայմանագրի N 1 հավելվածում նշված տեխնիկական բնութագրին չհամապատասխանող ծառայություն մատուցելու յուրաքանչյուր դեպքում Կատարողից գանձվում է տուգանք՝ պայմանագրի 4.1 կետում նախատեսված գումարի 1 (մեկ) տոկոսի չափով: Ընդ որում տուգանքը հաշվարկվում է նաև ծառայությունը պայմանագրով սահմանված ժամկետում մատուցելու, սակայն պատվիրատուի կողմից այդ չընդունվելու դեպքում:

5.3 Պայմանագրով նախատեսված ծառայության մատուցման հաշվետվության ներկայացման ժամկետը խախտելու դեպքում Կատարողից յուրաքանչյուր ուշացված աշխատանքային օրվա համար գանձվում է տույժ՝ մատուցման ենթակա, սակայն չմատուցված ծառայության գնի 0,1 (զրո ամբողջ մեկ տասնորդական) տոկոսի չափով:

5.4 Պայմանագրի 5.2, 5.3 և 5.5.1 կետերով նախատեսված տուգանքը և տույժը հաշվարկվում և հաշվանցվում են ծառայություն մատուցելու արդյունքում Կատարողին վճարման ենթակա գումարների հետ:

5.5 Պատվիրատուի կողմից պայմանագրի 4.2 կետով նախատեսված ժամկետի խախտման դեպքում Պատվիրատուի նկատմամբ յուրաքանչյուր ուշացված աշխատանքային օրվա համար հաշվարկվում է տույժ՝ վճարման ենթակա, սակայն չվճարված գումարի 0,1 (զրո ամբողջ մեկ տասնորդական) տոկոսի չափով:

5.5.1 Պայմանագրով նախատեսված ծառայության մատուցման ողջ ընթացքում քաղաքաշինական նորմատիվատեխնիկական և հաստատված նախագծանախահաշվային փաստաթղթերով սահմանված պահանջների, այդ թվում շինարարական հրապարակի պատշաճ կազմակերպման, կահավորման, տեխնիկական անվտանգության, սանիտարահիգիենիկ և բնապահպանական (այդ թվում կլիմայի փոփոխության հետ հարմարվողականության միջոցառումների) նորմերի չպահպանման, ինչպես նաև սույն պայմանագրի 3.1 կետում նշված գրավոր հավաստումը չտրամադրելու համար Կատարողի նկատմամբ կիրառվում է պատասխանատվության հետևյալ միջոցները.

| N | Խախտումը | Պատասխանատվությունը |
|---|---|---|
| 1 | Շինարարական հրապարակի պատշաճ կազմակերպումը, կահավորումը չկատարելու նկատմամբ վերահսկողություն չիրականացնելը | **նախահաշվային գնի 1.0 % չափով առաջարկվում է** |
| 2 | Տեխնիկական անվտանգության նորմերի չպահպանելու նկատմամբ վերահսկողություն չիրականացնելը | 1 000 000 ՀՀ դրամ |
| 3 | Սանիտարահիգիենիկ և բնապահպանական նորմերի չպահպանելու նկատմամբ վերահսկողություն չիրականացնելը | 700 000 ՀՀ դրամ |

5.6 Պայմանագրով չնախատեսված դեպքերում կողմերն իրենց պարտավորությունները չկատարելու կամ ոչ պատշաճ կատարելու համար պատասխանատվության են ենթարկվում ՀՀ օրենսդրությամբ սահմանված կարգով:

5.7 Տույժերի և (կամ) տուգանքի վճարումը Կողմերին չի ազատում իրենց պայմանագրային պարտավորություններն ամբողջությամբ և պատշաճ՝ պայմանագրով սահմանված պահանջներին համապատասխան կատարելուց:

## 6. ԱՆՀԱՂԹԱՀԱՐԵԼԻ ՈՒԺԻ ԱԶԴԵՑՈՒԹՅՈՒՆ (ՖՈՐՍ-ՄԱԺՈՐ)

Սույն պայմանագրով և սույն պայմանագրի հիման վրա կնքված համաձայնագրերով պարտավորություններն ամբողջությամբ կամ մասնակիորեն չկատարելու համար կողմերն ազատվում են

---

[1] *Կատարողը կարող է հրաժարվել առաջարկված կանխավճարից կամ դրա մի մասից: Ընդ որում կնքվելիք պայմանագրում կանխավճարը սահմանվում է Պատվիրատուի և Կատարողի միջև համաձայնեցված չափով: Եթե պայմանագրով չի նախատեսվում կանխավճարի հատկացում, ապա սույն կետը հանվում է նախագծից:*

պատասխանատվությունից, եթե դա եղել է անհաղթահարելի ուժի ազդեցության հետևանքով, որը ծագել է սույն պայմանագիրը կնքելուց հետո, և որը կողմերը չէին կարող կանխատեսել կամ կանխարգելել: Այդպիսի իրավիճակներ են երկրաշարժը, ջրհեղեղը, հրդեհը, պատերազմը, ռազմական և արտակարգ դրություն հայտարարելը, քաղաքական հուզումները, գործադուլները, հաղորդակցության միջոցների աշխատանքի դադարեցումը, պետական մարմինների ակտերը և այլն, որոնք անհնարին են դարձնում սույն պայմանագրով պարտավորությունների կատարումը: Եթե արտակարգ ուժի ազդեցությունը շարունակվում է 3 (երեք) ամսից ավելի, ապա կողմերից յուրաքանչյուրն իրավունք ունի լուծել պայմանագիրը՝ այդ մասին նախապես տեղյակ պահելով մյուս կողմին:

## 7. ԱՅԼ ՊԱՅՄԱՆՆԵՐ

7.1 Պայմանագիրն ուժի մեջ է մտնում կողմերի ստորագրման պահից և գործում է մինչև կողմերի պայմանագրով ստանձնած պարտավորությունների ողջ ծավալով կատարումը:

Պայմանագրով նախատեսված կողմերի իրավունքների և պարտականությունների կատարման պայման է հանդիսանում պայմանագիրը ՀՀ ֆինանսների նախարարության կողմից հաշվառված լինելու հանգամանքը:

7.2 Պայմանագրից ծագած կողմի վճարային պարտավորությունը չի կարող դադարել այլ պայմանագրից ծագած՝ հակընդդեմ պարտավորության հաշվանցով, առանց կողմերի գրավոր և կնիքով հաստատված համաձայնության: Պայմանագրից ծագած պահանջի իրավունքը չի կարող փոխանցվել այլ անձի, առանց պարտապան կողմի գրավոր համաձայնության:

7.3 Այն դեպքում, երբ օրենքով նախատեսված կարգով օրենքի պահանջների կատարման նկատմամբ հսկողության կամ վերահսկողության կամ բողոքների քննության արդյունքում արձանագրվում է, որ գնման գործընթացում, մինչև պայմանագրի կնքումը, Կատարողը ներկայացրել է կեղծ փաստաթղթեր (տեղեկություններ և տվյալներ), կամ վերջինիս ընտրված մասնակից ճանաչելու մասին որոշումը չի համապատասխանում Հայաստանի Հանրապետության օրենսդրությանը, ապա այդ հիմքերն ի հայտ գալուց հետո Պատվիրատուն միակողմանիորեն լուծում է պայմանագիրը, եթե արձանագրված խախտումները մինչև պայմանագրի կնքումը հայտնի լինելու դեպքում գնումների մասին Հայաստանի Հանրապետության օրենսդրության համաձայն հիմք կհանդիսանային պայմանագիրը չկնքելու համար: Ընդ որում, Պատվիրատուն չի կրում պայմանագրի միակողմանի լուծման հետևանքով Կատարողի համար առաջացող վնասների կամ բաց թողնված օգուտի ռիսկը, իսկ վերջինս պարտավոր է Հայաստանի Հանրապետության օրենքով սահմանված կարգով փոխհատուցել իր մեղքով Պատվիրատուի կրած վնասներն այն ծավալով, որի մասով պայմանագիրը լուծվել է:

7.4 Պայմանագրի հետ կապված վեճերը ենթակա են քննության Հայաստանի Հանրապետության դատարաններում:

7.5 Պայմանագրում փոփոխություններ և լրացումներ կարող են կատարվել միայն Կողմերի փոխադարձ համաձայնությամբ՝ համաձայնագիր կնքելու միջոցով, որը կհանդիսանա պայմանագրի անբաժանելի մասը:

Արգելվում է պայմանագրում, իսկ եթե պայմանագրի գինը գործոնային է, ապա նաև այդ պայմանագրին կից հաջորդող յուրաքանչյուր տարիներին կնքված համաձայնագրում կատարել այնպիսի փոփոխություններ, որոնք հանգեցնում են գնվող ծառայության ծավալների կամ ձեռք բերվող ծառայության միավորի գնի կամ պայմանագրի գնի արհեստական փոփոխման:

Պայմանագրի կողմերից անկախ գործոնների ազդեցությամբ պայմանագրի փոփոխման յուրաքանչյուր դեպք սահմանում է Հայաստանի Հանրապետության կառավարությունը:

7.6 Եթե պայմանագիրն իրականացվում է գործակալության պայմանագիր կնքելու միջոցով

1) Կատարողը պատասխանատվություն է կրում գործակալի պարտավորությունների չկատարման կամ ոչ պատշաճ կատարման համար.

2) պայմանագրի կատարման ընթացքում գործակալի փոփոխման դեպքում Կատարողը գրավոր տեղեկացնում է Պատվիրատուին՝ տրամադրելով գործակալության պայմանագրի պատճենը և դրա կողմ հանդիսացող անձի տվյալները՝ փոփոխությունը կատարվելու օրվանից հինգ աշխատանքային օրվա ընթացքում:[2]

7.7 Եթե պայմանագիրն իրականացվում է համատեղ գործունեության (կոնսորցիումի) պայմանագիր կնքելու միջոցով, ապա այդ պայմանագրի մասնակիցները կրում են համատեղ և համապարտ պատասխանատվություն: Ընդ որում, կոնսորցիումի անդամի կոնսորցիումից դուրս գալու դեպքում պայմանագիրը միակողմանիորեն լուծվում է և կոնսորցիումի անդամների նկատմամբ կիրառվում են պայմանագրով նախատեսված պատասխանատվության միջոցները:[3]

7.8 Ծառայության մատուցման ժամկետը կարող է երկարաձգվել մինչև պայմանագրով այդ ժամկետը լրանալը՝ Կատարողի գրավոր առաջարկի առկայության դեպքում՝ պայմանով, որ Պատվիրատուի համար ծառայության մատուցման պահանջը չի վերացել, իսկ Կատարողի գրավոր առաջարկը ներկայացվել է ոչ ուշ, քան պայմանագրով ի սկզբանե ծառայությունների մատուցման համար սահմանված ժամկետը լրանալուց առնվազն 7 օրացուցային օր առաջ: Ընդ որում սույն կետով սահմանված դեպքում ծառայության մատուցման ժամկետը կարող է երկարաձգվել մեկ անգամ մինչև 30 օրացուցային օրով, բայց ոչ ավելի քան պայմանագրով սահմանված ժամկետն է:

7.9 Պայմանագրի պատշաճ կատարման պայմաններում կողմերի (Կատարող կամ Պատվիրատու) օգուտները (խնայողություններ) կամ կրած վնասները տվյալ կողմի օգուտը կամ կրած վնասն են:

Պայմանագրի կողմերի՝ երրորդ անձանց նկատմամբ պարտավորությունները՝ ներառյալ պայմանագրի կատարման շրջանակում Կատարողի կնքած այլ գործարքները և դրանցից բխող պարտավորությունները, դուրս են պայմանագրի կարգավորման շրջանակներից և չեն կարող ազդել պայմանագրի կատարման արդյունքն ընդունելու վրա: Այդ գործարքների և դրանցից բխող պարտավորությունների կատարման հետ կապված

---

[2] *Սույն կետը հանվում է պայմանագրից, եթե պայմանագիրը չի իրականացվում գործակալության պայմանագիր կնքելու միջոցով:*

[3] *Սույն կետը հանվում է պայմանագրից, եթե պայմանագիրը չի իրականացվում համատեղ գործունեության (կոնսորցիումի) պայմանագիր կնքելու միջոցով:*

հարաբերությունները կարգավորվում են այդ գործարքների հետ կապված հարաբերությունները կարգավորող նորմերով, և դրանց համար պատասխանատու է Կատարողը:

7.10 Պայմանագիրը չի կարող փոփոխվել կողմերի պարտավորությունների մասնակի չկատարման հետևանքով կամ ամբողջությամբ լուծվել կողմերի փոխադարձ համաձայնությամբ՝ բացառությամբ՝ Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված կարգով ծառայության մատուցման համար անհրաժեշտ ֆինանսական հատկացումների նվազեցման դեպքերի: Ընդ որում, պայմանագրի կողմերի՝ պարտավորությունների մասնակի չկատարման կամ ամբողջությամբ լուծման կողմերի փոխադարձ համաձայնությունն անհրաժեշտ է ձեռք բերել նախքան Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված կարգով ծառայության մատուցման համար անհրաժեշտ ֆինանսական հատկացումների նվազեցումը:

7.11 Կատարողի կողմից ստանձնած պարտավորությունները չկատարելու կամ ոչ պատշաճ կատարելու հիմքով պայմանագիրն ամբողջությամբ կամ մասնակի միակողմանի լուծելու մասին ծանուցումը Պատվիրատուն հրապարակում է www.procurement.am հասցեով գործող ինտերնետային կայքի «Պայմանագրերը միակողմանի լուծելու մասին ծանուցումներ» բաժնում՝ նշելով հրապարակման ամսաթիվը: Կատարողը, պայմանագիրը միակողմանի լուծելու վերաբերյալ, համարվում է պատշաճ ծանուցված՝ ծանուցումը, սույն կետով սահմանված հրապարակվելուն հաջորդող օրվանից: Պայմանագիրն ամբողջությամբ կամ մասնակի միակողմանի լուծելու մասին ծանուցումը տեղեկագրում հրապարակվելու օրը Պատվիրատուն այն ուղարկում է նաև Կատարողի էլեկտրոնային փոստին:

7.12 Կատարողն իրավունք ունի պայմանագրի կնքումից հետո Հայաստանի Հանրապետության քաղաքացիական օրենսգրքի 48-րդ գլխով սահմանված դեպքերում և կարգով կատարել գնման պայմանագրից ծագող դրամական պահանջի զիջում՝ պահանջի զիջման դիմաց ֆինանսավորման (ֆակտորինգի) պայմանագրի (այսուհետ՝ ֆակտորինգի պայմանագիր) հիման վրա: Ֆակտորինգի պայմանագիրը պետք է սահմանի, որ ֆինանսական գործակալը համաձայն է, որ պայմանագրով նախատեսված հիմքերի առկայության դեպքում Պատվիրատուն վճարումներն իրականացնելիս ապահովի Կատարողի նկատմամբ տույժերի ու տուգանքների հաշվարկումը և հաշվանցումը վճարվելիք գումարների հետ՝ անկախ պահանջը զիջված լինելու հանգամանքից: Ընդ որում, ֆակտորինգի պայմանագրի հիման վրա պահանջի զիջման մասին գրավոր ծանուցումը (հավելված N 4) ստանալու դեպքում Պատվիրատուն պայմանագրով սահմանված վճարումը կատարում է ֆինանսական գործակալին, եթե ծանուցումը ստացվել է Պատվիրատուի կողմից վճարման հանձնարարագիրը և արձանագրության պատճենը լիազորված մարմնի գանձապետական համակարգ մուտքագրելու օրվան նախորդող օրը:

նախորդող օրը:

7.13 Պայմանագրի վավերապայմաններում Կատարողի կողմից նշված բանկային տվյալները պետք է համապատասխանեն միակողմանի հաստատված հայտարարության՝ տուժանքի ձևով պայմանագրի ապահովման և դրան կից վճարման պահանջագրերի բանկային տվյալներին:

7.14 Սույն պայմանագրի կապակցությամբ ծագած վեճերը լուծվում են բանակցությունների միջոցով: Համաձայնություն ձեռք չբերելու դեպքում վեճերը լուծվում են դատական կարգով:

7.15 Սույն պայմանագիրը կազմված է 19 էջից, կնքվում է երկու օրինակից, որոնք ունեն հավասարազոր իրավաբանական ուժ: Սույն պայմանագրի N 1, N 2, N 3, N 3.1, N4, N5 և N6 հավելվածները հանդիսանում են պայմանագրի անբաժանելի մասը, յուրաքանչյուր կողմին տրվում է պայմանագրի մեկ օրինակ:

7.16 Սույն պայմանագրի նկատմամբ կիրառվում է Հայաստանի Հանրապետության իրավունքը:

7.17 Պայմանագրով նախատեսված ծառայությունների մատուցումն իրականացվում է այդ նպատակով ֆինանսական միջոցների առկայության և դրա հիման վրա կողմերի միջև համապատասխան համաձայնագրի կնքման միջոցով: Պայմանագիրը լուծվում է, եթե այն կնքելու օրվան հաջորդող վեց ամսվա ընթացքում այդ նպատակով պայմանագրի կատարման համար ֆինանսական միջոցներ չեն նախատեսվում: Ընդ որում յուրաքանչյուր հաջորդ համաձայնագիրը կնքելու համար ֆինանսական միջոցների նախատեսման համար սույն կետով տրված վեցամսյա ժամանակահատվածի հաշվարկը սկսվում նախորդ համաձայնագրով սահմանված ծառայության մատուցման արդյունքը ողջ ծավալով պատվիրատուի կողմից ընդունվելու օրվանից: Ընդ որում, Կատարողը համաձայնագիրը կնքում, իսկ տուժանքի ձևով ներկայացված պայմանագրի ապահովման փոխարինման դեպքում նաև նոր ապահովումը Պատվիրատուին ներկայացնում է համաձայնագիր կնքելու ծանուցումը ստանալու օրվանից 15 աշխատանքային օրվա ընթացքում: Հակառակ դեպքում պայմանագիրը Պատվիրատուի կողմից միակողմանիորեն լուծվում է:

## 8. ԿՈՂՄԵՐԻ ՀԱՍՑԵՆԵՐԸ, ԲԱՆԿԱՅԻՆ ՎԱՎԵՐԱՊԱՅՄԱՆՆԵՐԸ ԵՎ ՍՏՈՐԱԳՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ

| ՊԱՏՎԻՐԱՏՈՒ | ԿԱՏԱՐՈՂ |
|---|---|
| ՀՀ Արարատի մարզպետի աշխատակազմ | «ԱՐՏԱԿ ՄԱՐՏԻՐՈՍՅԱՆ» Ա/Ձ |
| Ք.Արտաշատ, Օգոստոսի 23/60 | Գեղարքունիքի մարզ, գ.Գեղաքար. 2փ,4 տ |
| ՀՀ Ֆինանսների նախարարություն | Կոնվերս բանկ ՓԲԸ |
| Հ/Հ՝ | Հ/Հ 19300548769200 |
| ՀՎՀՀ՝ 04245019 | ՀՎՀՀ՝4370639 |
| ---------------- Ա.Մկրտչյան | -------------------------Ա.Մարտիրոսյան |
| (ստորագրություն) | (ստորագրություն) |
| Կ.Տ. | Կ.Տ. |

*Անհրաժեշտության դեպքում պայմանագրում կարող են ներառվել ՀՀ օրենսդրությանը չհակասող դրույթներ:*

Հավելված N 1
« 07 » 04
2026 թ. կնքված
ծածկագրով պայմանագրի

ՏԵԽՆԻԿԱԿԱՆ ԲՆՈՒԹԱԳԻՐ - ԳՆՄԱՆ ԺԱՄԱՆԱԿԱՑՈՒՅՑ*

Նախատեսված ծառայության կատարման համար պահանջվում է **Քաղաքաշինության բնագավառում շինարարության որակի տեխնիկական հսկողության իրականացման** լիցենզիա և և լիցենզիայի ներդիրներ:

ՀՀ դրամ

| հրավերով նախատեսված չափաբաժնի համարը | Ծառայության | | | | | | | մատուցման | |
|---|---|---|---|---|---|---|---|---|---|
| | գնումների պլանով նախատեսված միջանցիկ ծածկագիրը` ըստ ԳՄԱ դասակարգման (CPV) | անվանումը | տեխնիկական բնութագիրը | չափման միավորը | գնման գինը /ՀՀ դրամ/ | ընդհանուր քանակը | հասցեն | ժամկետը** |
| 1 | 71351540-501 | «ՀՀ Արարատի մարզի Վեդի համայնքի Եղեգնավան բնակավայրի մանկապարտեզի կառուցման» շինարարական աշխատանքների որակի տեխնիկական հսկողության խորհրդատվական ծառայություն | Տես հավելված 1.1 | հատ | 1100000 | 1 | ՀՀ Արարատի մարզի Վեդի համայնք, Եղեգնավան գյուղ Ա.Խանջյան փող 23/1 | Մինչև Շինարարական աշխատանքների ավարտի հետ |

**Հավելված 1.1**

ՏԵԽՆԻԿԱԿԱՆ ԲՆՈՒԹԱԳԻՐ

| | **Շինարարության որակի տեխնիկական հսկողության ծառայության մատուցման բնութագիրը** | |
|---|---|---|
| 1 | Շինարարական աշխատանքների որակի տեխնիկական հսկողության /այսուհետ` Հսկողություն/ **խորհրդատվական** ծառայության մատուցում հիմքերը և պահանջները | «Քաղաքաշինության մասին» ՀՀ օրենքի, ՀՀ կառավարության 19.03.2015թ թիվ 596-Ն որոշման, ՀՀ քաղաքաշինության նախարարի 28.04.1998թ թիվ 44 հրամանի «Շինարարության որակի տեխնիկական հսկողության իրականացման հրահանգ» դրույթների, ՀՀ կառավարության 04.05.2017թ թիվ 526-Ն որոշման և ՀՀ քաղաքաշինության նախարարի 2008 թվականի հունվարի 14-ի N11-Ն հրամանի համաձայն իրականացնել ամենօրյա (8 ժամ) տեխնիկական հսկողություն: |
| 2 | **Հսկողության ենթակա աշխատանքների տեսակները և անվանումները** | Կից ներկայացվող նախագծերի փաթեթներով և ծավալաթերթով նախատեսված աշխատանքների |
| 3 | **Անձնակազմի ներգրավվածությունը** | Առանձին տեսակի շինարարական աշխատանքների որակի տեխնիկական հսկողության և կատարողական ակտերի ներկայացման ապահովում հիմնական լիցենզիային կից ներկայացվող ներդիրներում ընդգրկված մասնագետների միջոցով և գրավոր հաստատմամբ` ճարտարագետ-շինարարի, ճարտարագետ-էներգետիկի, ճարտարագետ-էլեկտրիկի, ճարտարագետ-հիդրոտեխնիկի կողմից` յուրաքանչյուրն իր կողմից վերահսկման ենթակա շինաշխատանքների համար: |
| 4 | **Որակի տեխնիկական հսկողության ծառայությունների մատուցման նպատակները** | Տեխնիկական հսկողությունը իրականացվում է ՀՀ քաղաքաշինության նախարարության 28.04.1998թ. No. 44 հրամանի «Շինարարության որակի տեխնիկական հսկողության իրականացման հրահանգ»-ի հիման վրա և Պատվիրատուի կողմից սահմանվող պարտավորությունների համաձայն Տեխնիկական բնութագրի, ինչպես նաև Խորհրդատուի կողմից ներկայացված ու պատվիրատուի կողմից ընդունված ծառայության մատուցման մեթոդաբանության հիման վրա:<br>Տեխնիկական հսկողության հիմնական խնդիրներն են` ապահովել շինարարական աշխատանքների պահանջվող որակը, նրանց համապատասխանությունը նախագծա-նախահաշվային փաստաթղթերին, գործող նորմերին, ստանդարտներին և շինարարության բնագավառին առնչվող օրենքներին:<br>Տեխնիկական հսկողությունն ընթանում է ամբողջ շինարարության ընթացքում ամենօրյա ծավալով (8 ժամ), որը ապահովում է շինարարության իրականացման համապատասխանությունը հաստատված ճարտարապետաշինարարական աշխատանքային նախագծերի պահանջներին և որակին: |

| | | |
|---|---|---|
| 5 | Ծառայության մատուցման ընդհանուր պահանջներ | Շինարարության տեխնիկական հսկողությունը իրականացվում է սկսած ծրագրի շինարարական աշխատանքների մեկնարկի օրվանից մինչև «Ավարտված շինարարական օբյեկտն ընդունող հանձնաժողովի» ակտի վավերացումը:<br>Ապահովելով Ծառայությունը մատուցողի կողմից նշանակված տեխնիկական հսկիչի ամենօրյա (8 ժամ) ներկայությունը շինարարական օբյեկտում, ինչը հաստատվում է շինարարության վարման մատյանում գրառումների կատարման միջոցով:<br>Խորհրդատուի մյուս մասնագետների այցելությունները ևս հաստատվում են շինարարության վարման մատյանում գրառումների կատարման միջոցով:<br>Տվյալ շինարարական տեղամասում նշանակված տեխնիկական հսկիչի անհարգելի բացակայության դեպքում Ծառայություն մատուցողը պայմանագրով սահմանված կարգով կրում է պատասխանատվություն:<br>• Հսկողական /համատարած/ ստուգման միջոցով կատարվող շինարարական աշխատանքների ընթացքը, համապատասխանությունն ապահովելու նպատակով՝ աշխատանքային նախագծին լուծումներին, կապալի պայմանագրի դրույթներին և գործող շինարարական նորմերին ու կանոններին:<br>• Ստուգել հիմնական առանցքների տեղակայման՝ նշահարման համապատասխանությունը աշխատանքային նախագծի պահանջներին, չափագրել գեոդեզիական նիշերը:<br>• Ստուգել շինարարությունում օգտագործվող նյութերի, շինվածքների, կոնստրուկցիաների և ինժեներական սարքավորումների որակը հաստատող սերտիֆիկատների, տեխնիկական անձնագրերի և լաբորատոր փորձարկումների և վերլուծությունների արդյունքների գոյությունը և, նախագծի ու արտադրանքի որակի պահանջներին անհամապատասխանության դեպքում, արգելել դրանց օգտագործումը, այն ձևակերպելով համապատասխան ակտերով<br>• Պարբերաբար ստուգել բոլոր կատարված շինմոնտաժային աշխատանքների որակն ու տեխնոլոգիական հերթականությունը, նրանց համապատասխանությունը նախագծին, շինարարական նորմերին և կանոններին, հատուկ աշխատանքների տեխնիկական պայմաններին<br>• Մասնակցել ինժեներական կոմունիկացիաների և կառույցների, խողովակաշարերի, էլեկտրասարքավորումների փորձարկումներին՝ ստորագրելով համապատասխան փորձարկման ակտեր:<br>• Կապալառուի կողմից վարվող շինարարության ընդհանուր մատյանում նշել նկատողությունները և դիտողությունները հայտնաբերված թերությունները և դրանց վերացման մասին համապատասխան գրառումները:<br>• Կապալառուի, հեղինակային հսկող խորհրդատուի հետ համատեղ կազմել և վավերացնել ծածկվող աշխատանքների ընդունման, փորձարկման, գրունտների ուսումնասիրման, շենքի (կառույցի) առանցքների նշահարումների ակտերը:<br>• Ստուգել բոլոր այն լաբորատոր փորձարկումների արդյունքները, որոնք անհրաժեշտ են որակի ապահովման համար:<br>• Հաստատել և հսկել աշխատանքների իրականացման ծրագիրը:<br>• Գնահատել և հսկել շինարարական աշխատանքների ընթացքը, որպեսզի ապահովվի շինարարական աշխատանքների ավարտը՝ համաձայն պայմանագրի մեջ նշված ժամանակացույցի:<br>• Հսկողական ստուգման միջոցով իրականացվող աշխատանքների կատարման ժամկետների համապատասխանության, ինչպես նաև թերությունների բացահայտման և վերացման ապահովում:<br>• Կապալառուի կատարողական ակտի կազմման աշխատանքներին մասնակցության ապահովում: Վավերացնել կապալառուի կողմից կազմված և վճարման ներկայացվող կատարողական ակտերը՝ ինչը պետք է հիմնավորվի խորհրդատուի համապատասխան մասնագետի կողմից իրականացված չափագրումներով և հաշվարկներով: Խորհրդատուն պատասխանատու է կատարողական ակտում բերված աշխատանքների ծավալների իսկության և որակի համար:<br>• Ստուգել բոլոր փաստաթղթերը, որոնք անհրաժեշտ են կապալառուին համապատասխան վճարումները իրականացնելու համար:<br>• Ստորագրել շինարարության ավարտական ակտերը:<br>• Նշված ակտերը չվավերացնելու դեպքում գրավոր ներկայացնել պատճառները:<br>• Պատվիրատուի առաջին իսկ պահանջով ներկայացնել մինչև պահանջի պահը իրականացված աշխատանքների չափագրման արդյունքները՝ մանրամասն հաշվարկներով:<br>• Կապալառուին պարզաբանել նախագծային փաստաթղթերի հետ կապված հարցերը:<br>• Օբյեկտի ինժեներական համակարգերի կառուցման նկատմամբ հսկողությունը պետք է իրականացվի հաստատված նախագծով նախատեսված տեխնոլոգիական հաջորդականությանը համապատասխան և տվյալ աշխատանքների համար սահմանված ժամանակահատվածում:<br>• Անհրաժեշտության դեպքում առաջարկել աշխատանքային ժամանակացույցի մեջ կատարել փոփոխություններ կամ առաջարկել կատարել լրացուցիչ վճարումներ (երկու դեպքում էլ անհրաժեշտ է Պատվիրատուի համաձայնությունը):<br>• Իրականացնել հսկողություն աշխատանքային տեղամասերում շինարարական աշխատանքների անվտանգությունը ապահովելու նպատակով: Հրահանգել կապալառուին ապահովել աշխատանքային տեղամասերում անհրաժեշտ նշանների, լուսավորության, անվտանգության այլ միջոցների առկայությունը:<br>• Շենքերի, կառույցների, ծրագրի բնապահպանական և սոցիալական երաշխիքների պահանջների անհամապատասխանությանը, կայունությանը և հուսալիությանը սպառնացող թերությունների հայտնաբերման դեպքում անհապաղ տեղյակ պահել Պատվիրատուին: |

| | | |
|---|---|---|
| | | • Խորհրդատուն պետք է ապահովի, որպեսզի Պատվիրատուն իրազեկված լինի շինարարության ընթացքում ցանկացած չնախատեսված խնդիրների մասին:<br>• 24 ժամվա ընթացքում պատվիրատուին տեղեկացնել ծրագրի հետ կապված ցանկացած պատահարի կամ վթարի մասին, որը ազդել է Ծրագրի վրա, և որը կարող է էական բացասական ազդեցություն ունենալ շրջակա միջավայրի, ազդակիր համայնքի, բնակչության կամ աշխատողների վրա, օրինակ՝ աշխատանքային պատահարներ, որոնք կարող են հանգեցնել լուրջ վնասվածքների կամ տրանսպորտային պատահարների և այլն:<br>• Տեխնիկական հսկողության պատասխանատու հիմնական ճարտարագետ տեխհսկիչը և կազմակերպությունը պետք է հետևեն շինարարության ամբողջ ընթացքում շինարարության կամակերպման նախագծով նախատեսված շինարարական հրապարակի կազմակերպմանը և դրա շարունակական պահպանությանը, ինչպես նաև շինարարական հրապարակի տեխնիկական անվտանգության ու սանիտարական նորմերի ամբողջապես և անընդհատ պահպանմանը՝ հակառակ պարագայում Պատվիրատուի կողից արձանագրված յուրաքանչյուր խախտման դեպքում կկիրառվեն պայմանագրով նախատեսված տույժեր և տուգանքներ: |
| 6 | *Ծառայության մատուցման հատուկ պահանջներ* (տեխնիկական բնութագիր) | Օբյեկտի շինմոնտաժային աշխատանքների նկատմամբ որակի տեխնիկական հսկողության կազմակերպությունը (պատասխանատու- հսկիչը, խորհրդատուն) պետք է սեփական ռեսուրսներով և միջոցներով իրականացնի կառուցվող օբյեկտի կառուցվածքների կամ նրանց առանձին մասերի (այդ թվում սարքավորումների, համակարգերի, ցանցերի և սարքերի ) լաբորատոր փորձարկումները և նմուշառումները, ինչպես նաև ապահովի դրանց արդյունքների ներկայացումը Պատվիրատուին՝ ամսական հաշվետվությունների և/կամ շինարարական ակտերի հետ ներկայացվող առանձին հաշվետվությունների տեսքով:<br>– Լաբորատոր փորձարկումների քանակը, ձևերը և մեթոդաբանությունը պետք է իրականացվեն համաձայն պատվիրատուի պահանջի և ՀՀ-ում գործող նորմատիվատեխնիկական փաստաթղթերի:<br>– Նշված փորձարկումները պետք է ապահովեն տվյալ օբյեկտի համար նախատեսված փորձարկման ենթակա բոլոր աշխատանքների և առանձին տեսակի նյութերի ամբողջ ծավալը: Ընդ որում, դրանք պետք է պարտադիր ներառեն՝<br>– հողային աշխատանքների (հիմնատակի գրունտի ֆիզիկամեխանիկական և հետլիցքի գրունտի սեղմման ամրության որոշմամբ) լաբորատոր հետազոտությունները,<br>– Հակադարձ լիցքերի խտության լաբարատոր ստուգումներ<br>– ե/բ կոնստրուկցիաների դեպքում ամրանների գործիքային ստուգման (ձգում, ծռում) և բետոնների ամրության ամբողջական լաբորատոր պայմաններում քայքայող եղանակով (սեղմման ամրություն) ստուգման (անհրաժեշտության դեպքում՝ ցածր նախնական արդյունքի պարագայում հորատման միջոցով նմուշառման ՝ (կեռի վերցնմամբ) և ստուգման, ինչպես նաև չքայքայող եղանակով) լաբորատոր համալիր և ամբողջական հետազոտությունները<br>– Մետաղական պատրաստվածքների լաբորատոր հետազոտության, դրանց անձնագրերի կազմման, բոլոր եռակցվող կարանների գործիքային հետազոտությունները,<br>– Բետոնե և ե/բ պատրաստվածքների լաբորատոր հետազոտություններ /եզրաքարեր, բետոնե բլոկներ, դիտահորեր և այլ պատրաստվածքներ/<br>– Բոլոր տեսակի ջերմամեկուսիչ նյութերի լաբորատոր հետազոտություններ /գոլորշաթափանցելիություն, ջերմահաղորդականության և տեսակարար կշիռների որոշում/<br>– Էլեկտրական մալուխների և հաղորդալարերի լաբորատոր հետազոտություններ տեղադրվող բոլոր տեսակ նյութերի համար<br>– Բոլոր նմուշառումները պետք է կատարվեն տեխնիկական հսկողություն իրականացնող կազմակերպության կողմից՝ օբյեկտում ապահովելով անհրաժեշտ քանակությամբ նմուշառման ատրիբուտների առկայությունը, տվյալ շինարարական աշխատանքների կատարմանը զուգահեռ,<br>– Բետոնե նմուշների պահպանությունը շինարարական օբյեկտում նորրմատիվային պահանջներին համապատասխան ևս պետք է իրականացվի տեխնիկական հսկողություն իրականացնող կազմակերպության կողմից:<br>– Բոլոր տեսակ լաբորատոր հետազոտությունները պետք է իրականացվեն նորմատիվային պահանջներին և ստանդարտներին համապատասխան անհրաժեշտ ամբողջ քանակությամբ, անկախ ընկերության կողմից գնման գործընթացի շրջանակներում ներկայացված լաբորատոր փորձարկումների պլանի: |
| 7 | **Հաշվետվության ներկայացման պահանջներ** | Կատարողը պարտավոր է ներկայացնել Պատվիրատուին Ծառայությունների վերաբերյալ ընթացիկ, ամսեկան և վերջնական հաշվետվություններ, որոնք հանդիսանում են Ծառայությունների հանձնման-ընդունման արձանագրությունները հիմնավորող փաստաթղթեր:<br>Ընթացիկ հաշվետվությունները, հանդիսանում է շինարարության վարման մատյանը՝ համապատասխան գրառումներով: Դրանից բացի Խորհրդատուն Պատվիրատուին ներկայացնում է ամսական հաշվետվություն:<br>• **Ամսական հաշվետվությունները** ներկայացվում են **ամենամսյա,** ոչ ուշ քան շինարարական աշխատանքները սկսելու օրվան հաջորդող յուրաքանչյուր ամսվա մինչև ամսի 5-ը՝ թղթային և էլեկտրոնային տարբերակներով, համապատասխան ուղեկցող գրություններով: Ամսական հաշվետվությունում տրվում են պայմանագրի հղումը, ընդհանուր տեղեկություններ շինարարական աշխատանքների ընթացքի, իրացված գումարների վերաբերյալ, ինչպես նաև գնահատվում է կապալառու կազմակերպության աշխատանքը, բացահայտվում են առկա խնդիրները և ներկայացվում առաջարկներ դրանց վերացման վերաբերյալ:<br>- Պատվիրատուին ներկայացնելով կապալառուի կողմից հաշվետու ժամանակահատվածի ընթացքում ավարտված աշխատանքների որակը, հսկողական չափագրությունների միջոցով փաստացի կատարված շինմոնտաժային աշխատանքների և |

<table>
<tr><td></td><td></td><td>նախագծային փաստաթղթերով նախատեսված աշխատանքների ծավալների և հաշվարկների հիմնավորող փաստաթղթերը՝ փորձարկումների և լաբարատոր ստուգումների եզրակացություններ, մատակարարված նյութերի, կոնստրուկցիաների որակի համապատասխանության հավաստագրեր, սարքավորումների որակի անձնագրեր, ծածկված (միջանկյալ) աշխատանքների ընդունման ակտեր, ծածկված (միջանկյալ) աշխատանքների լուսանկարներ (տպագրված և էլեկտրոնային կրիչով), սխեմաներ, թույլտվություններ և այլ անհրաժեշտ փաստաթղթեր)՝ հսկողության խորհրդատուի հաստատումով:<br>- Պատվիրատուին ներկայացվող ամսական հաշվետվությունները պետք է պարունակեն տեղեկատվություն Կապալառուի /շինարարական կազմակերպության/ շինարարական աշխատանքներ իրականացնելու անկարողության մասին՝ նշելով չաշխատած օրերի քանակը, դրանց պատճառները, եթե այդպիսիք առկա են, ինչպես նաև հաշվետու ժամանակահատվածում իրականացված լաբորատոր հետազոտությունների եզրակացությունների և կապալառի կողմից շինարարական հրապարակի կազմակերպման ու տեխնիկական անվտանգության նորմերի պահպանման կամ չպահպանման վերաբերյալ տեղեկատվություն՝ չպահպանման դեպքում վերոգրյալ փաստը հավաստող նյութերի ներկայացմամբ:<br>- Յուրաքանչյուր կատարողական ակտի ժամանակահատվածին համապատասխան, կատարողական ակտը ծառայություն մատուցողի կողմից ստորագրելուց հետո երկօրյա ժամկետում ծառայութլունների հանձնման-ընդունման արձանագրությունների հետ մեկտեղ, Պատվիրատուին ներկայացնել իրականացված ծառայությունները և կատարված աշխատանքները հավաստող ու հիմնավորող տեխնիկական փաստաթղթերի պատճենները (համառոտ նկարագրություն տվյալ ժամանակահատվածում իրականացված շինարարական աշխատանքների և տեխ.հսկողության ծառայութլունների վերաբերյալ):<br>• <u>Վերջնական հաշվետվություն</u> խորհրդատուն Պատվիրատուին է ներկայացնում «Ավարտված շինարարական օբյեկտն ընդունող հանձնաժողովի» ակտի ստորագրումից հետո 5 օրյա ժամկետում, որը պետք է ներառի ամբողջ ընթացքի վերաբերյալ ամփոփ հաշվետվություն և եզրակացություն այն մասին, որ օբյեկտը կառուցվել է ՆՆՓ և նորմատիվատեխնիկական փաստաթղթերի պահանջներին համապատասխան և պետք է ընդգրկի հետևյալ փաստաթղթերի պատճենները՝հետևայալ տեղեկատվությունը՝<br>- պայմանագրի տվյալները<br>- պայմանագրի փոփոխությունները<br>- ավարտական կատարողական գծագրեր<br>- փաստացի իրականցված աշխատանքների և գումարների աղյուսակ ըստ ամիսների<br>- ավարտված շինարարական օբյեկտի լուսանկարներ (տպագրված և էլեկտրոնային կրիչով)՝ տարբեր ընթացքների<br>- ընդհանուր մեկանբանություններ կապալառուի գործունեության վերաբերյալ<br>- այլ տեղեկատվություններ, ըստ անհարաժեշտության<br><u>Խորհրդատուի վերջին ամսվա կատարողական վճարումը կիրականցվի վերջնական հաշվետվության ներկայացնելուց հետո:</u></td></tr>
<tr><td></td><td colspan="2">Ծառայության մատուցման ժամկետը</td></tr>
<tr><td></td><td>Սկիզբը</td><td>Ավարտը</td></tr>
<tr><td></td><td>Շինարարական աշխատանքների, տեխնիկական, հեղինակային հսկողության ծառայությունների ձեռքբերման համար կնքված պայմանագրերից /համաձայնագրերից/ վերջինի ուժի մեջ օրվան հաջորդող օրը /Պատվիրատուի կողմից գրավոր ծանուցմամբ/</td><td>Շինմոնտաժային աշխատանքների ամբողջական ավարտի հետ</td></tr>
</table>

:

**ՊԱՏՎԻՐԱՏՈՒ**

ՀՀ Արարատի մարզպետի աշխատակազմ
Ք.Արտաշատ, Օգոստոսի 23/60
ՀՀ Ֆինանսների նախարարաություն
Հ/Հ՝
ՀՎՀՀ՝ 04245019

------------------ Ա. Մկրտչյան
/ստորագրություն/
Կ.Տ

**ԿԱՏԱՐՈՂ**

«ԱՐՏԱԿ ՄԱՐՏԻՐՈՍՅԱՆ» Ա/Ձ
Գեղարքունիքի մարզ, գ.Գեղաքար. 2փ,4 տ
Կոնվերս բանկ ՓԲԸ
Հ/Հ 19300548769200
ՀՎՀՀ՝4370639

------------------ Ա.Մարտիրոսյան
/ստորագրություն/
Կ.Տ

Հավելված N 2
« 07 » 04 2026 թ. կնքված
ծածկագրով պայմանագրի

# ՎՃԱՐՄԱՆ ԺԱՄԱՆԱԿԱՑՈՒՅՑ*

ՀՀ դրամ

| Ծառայության | | | | | | | | | | | | | | | |
|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|
| հրավերով նախատեսված չափաբաժնի համարը | գնումների պլանով նախատեսված միջանցիկ ծածկագիրը՝ ըստ ԳՄԱ դասակարգման (CPV) | անվանումը | դիմաց վճարումները նախատեսվում է իրականացնել 2026-2027թ-ին՝ ըստ ամիսների, այդ թվում** | | | | | | | | | | | | |
| | | | հունվար | փետրվար | մարտ | ապրիլ | մայիս | հունիս | հուլիս | օգոստոս | սեպտեմբեր | հոկտեմբեր | նոյեմբեր | դեկտեմբեր | Ընդամենը |
| 1 | 71351540-501 | | ....% | ... % | ... % | ... % | ... % | ... % | ... % | ... % | ... % | ... % | ... % | ... % | 100 % |

* Վճարման ենթակա գումարները ներկայացվում են աճողական կարգով: Եթե պայմանագիրը կնքվում է "Գնումների մասին" ՀՀ օրենքի 15-րդ հոդվածի 6-րդ մասի հիման վրա, ապա սույն ժամանակացույցը լրացվում և կնքվում է ֆինանսական միջոցներ նախատեսվելու դեպքում կողմերի միջև կնքվող համաձայնագրի հետ միաժամանակ՝ որպես դրա անբաժանելի մաս:
** հրավերում գումարները նշվում են տոկոսով, իսկ պայմանագիրը կնքելիս տոկոսի փոխարեն նշվում է կոնկրետ գումարի չափ

**ՊԱՏՎԻՐԱՏՈՒ**

ՀՀ Արարատի մարզպետի աշխատակազմ
Ք.Արտաշատ, Օգոստոսի 23/60
ՀՀ ֆինանսների նախարարություն
Հ/Հ՝
ՀՎՀՀ՝ 04245019

------------------ Ա.Մկրտչյան
/ստորագրություն/
Կ.Տ

**ԿԱՏԱՐՈՂ**

«ԱՐՏԱԿ ՄԱՐՏԻՐՈՍՅԱՆ» Ա/Ձ
Գեղարքունիքի մարզ, գ.Գեղաքար. 2փ,4 տ
Կոնվերս բանկ ՓԲԸ
Հ/Հ 19300548769200
ՀՎՀՀ՝4370639

------------------------------- Ա.Մարտիրոսյան
/ստորագրություն/
Կ.Տ

*Հավելված 3*
*«     »          20  թ. կնքված*
*ծածկագրով պայմանագրի*

| Պայմանագրի կողմ | Պատվիրատու |
|---|---|
| ______________________________ | ______________________________ |
| ______________________________ | ______________________________ |
| գտնվելու վայրը ______________ | գտնվելու վայրը ______________ |
| հհ ______________________ | հհ______________________ |
| հվհհ ______________________ | հվհհ______________________ |

## ԱՐՁԱՆԱԳՐՈՒԹՅՈՒՆ N
## ՊԱՅՄԱՆԱԳՐԻ ԿԱՄ ԴՐԱ ՄԻ ՄԱՍԻ ԿԱՏԱՐՄԱՆ ԱՐԴՅՈՒՆՔՆԵՐԻ ՀԱՆՁՆՄԱՆ-ԸՆԴՈՒՆՄԱՆ

«     » «          » 20    թ.

Պայմանագրի /այսուհետ՝ Պայմանագիր/ անվանումը՝

______________________________________________________________________________

Պայմանագրի կնքման ամսաթիվը՝ «____» «____________________» 20 թ.
Պայմանագրի համարը՝   ___________
Պատվիրատուն և Պայմանագրի կողմը՝ հիմք ընդունելով պայմանագրի կատարման վերաբերյալ «     » «     » 20    թ. դուրս գրված N ____ հաշիվ ապրանքագիրը, կազմեցին սույն արձանագրությունը հետևյալի մասին. Պայմանագրի շրջանակներում Պայմանագրի կողմը մատուցել է հետևյալ ծառայությունները՝

| N | Մատուցված ծառայությունների | | | | | | | |
|---|---|---|---|---|---|---|---|---|
| | անվանումը | տեխնիկական բնութագրի համառոտ շարադրանքը | քանակական ցուցանիշը | | կատարման ժամկետը | | Վճարման ենթակա գումարը /հազար դրամ/ | Վճարման ժամկետը /ըստ վճարման ժամանակացույցի/ |
| | | | ըստ պայմանագրով հաստատված գնման ժամանակացույցի | փաստացի | ըստ պայմանագրով հաստատված գնման ժամանակացույցի | փաստացի | | |
| | | | | | | | | |
| | | | | | | | | |

Սույն արձանագրության երկկողմ հաստատման համար հիմք հանդիսացած հաշիվ ապրանքագիրը և դրական եզրակացությունը հանդիսանում են սույն արձանագրության բաղկացուցիչ մասը և կցվում են:

| Ծառայությունը հանձնեց | Ծառայությունն ընդունեց |
|---|---|
| ______________________________ | ______________________________ |
| ստորագրություն | ստորագրություն |
| ______________________________ | ______________________________ |
| ազգանուն, անուն | ազգանուն, անուն |
| Կ.Տ. | Կ.Տ. |

Հավելված 3.1
«     »     20   թ. կնքված
N     գնման պայմանագրի

ԱԿՏ N
պայմանագրի արդյունքը Պատվիրատուին հանձնելու փաստը ֆիքսելու վերաբերյալ

Սույնով արձանագրվում է, որ ______________-ի (այսուհետ՝ Պատվիրատու) և ___________-ի
Պատվիրատուի անունը    Կատարողի անունը

(այսուհետ՝ Կատարող) միջև 20    թ. ______________________ -ին կնքված N ____________________
պայմանագրի կնքման ամսաթիվը    պայմանագրի համարը

գնման պայմանագրի շրջանակներում Կատարողը 20 թ. __________-ին հանձնման-ընդունման նպատակով Պատվիրատուին հանձնեց ստորև նշված ծառայությունները.

| Ծառայության | | |
|---|---|---|
| անվանումը | չափման միավորը | քանակը (փաստացի) |
| | | |
| | | |

Սույն ակտը կազմված է 2 օրինակից, յուրաքանչյուր կողմին տրամադրվում է մեկական օրինակ:

КՈՂՄԵՐԸ

**Հանձնեց**

______________________
ազգանուն, անուն

______________________
ստորագրություն

**Ընդունեց**
հայտը նախագծած ներկայացուցիչ՝

______________________
ազգանուն, անուն

______________________
ստորագրություն

*Հավելված N 4*
*«        »        20  թ. կնքված*
*N        գնման պայմանագրի*

# ԾԱՆՈՒՑՈՒՄ

________________________________________ հայտնում է, որ .
ֆինանսական գործակալի անվանումը

1. ____________________-ի և ____________________-ի միջև «--»  20 թ. կնքված
պատվիրատուի անվանումը  կատարողի անվանումը

«---------/---------» ծածկագրով պայմանագրի (այսուհետ՝ Պայմանագիր) շրջանակում իր և

__________________-ի  միջև  «--»  20  թ-ին կնքվել է «--------------------» ծածկագրով ֆակտորինգի
կատարողի անվանումը

պայմանագիրը,

2. համաձայն է Պայմանագրի 7.12 կետով սահմանված պահանջներին:

________________________________________

ֆինանսական գործակալի անվանումը (ղեկավարի պաշտոնը, անունն ազգանունը)

ստորագրությունը

Կ. Տ. (առկայության դեպքում)

«--»  20 թ.

Հավելված N 5
2025 թ. կնքված
N        գնման պայմանագրի

# Ծառայության մատուցման մեթոդաբանություն

| Հ/Հ | Աշխատանքի անվանումը | Նկարագիրը |
|---|---|---|
| 1 | 2 | 3 |
| 1 | Հողային աշխատանքներ | |
| 2 | Բետոնային աշխատանքներ | |
| 3 | Ամրանային աշխատանքներ | |
| 4 | Քարի շարվածք | |
| 5 | Հարդարման աշխատանքներ | |
| 6 | Ինժեներական ցանցեր | |
| 7 | Ասֆալտաբետոն | |
| 8 | Փորձարկումներ և հսկողության պլան | |
| 9 | Աշխատանքների ընդունում | |

ՓՈՐՁԱՐԿՈՒՄՆԵՐ ԵՎ ՀՍԿՈՂՈՒԹՅԱՆ ՊԼԱՆ

| ՊԱՏՎԻՐԱՏՈՒ | ԿԱՏԱՐՈՂ |
|---|---|
| -------------------------------- | -------------------------------- |
| /ստորագրություն/<br>Կ.Տ | /ստորագրություն/<br>Կ.Տ |

Հավելված N 6
2026 թ. կնքված
N  գնման պայմանագրի

## Կապալի օբյեկտի, դրա առանձին մասերի (կոնստրուկցիաներ և այլն) և օգտագործվելիք  նյութերի և (կամ) սարքերի ու սարքավորումների երաշխիքային ժամկետներին ներկայացվող նվազագույն պահանջներ

**Աղյուսակ N1**

| N | Նախագծանախահաշվային փաստաթղթերով նախատեսված սարքավորումներ | չափի միավոր | Քանակ | Նվազագույն երաշխիքային ժամկետ |
|---|---|---|---|---|
| 1 | 2 | 3 | 4 | 5 |
| 1 | Ջեռուցման տուրբո կաթսա  ներառյալ ծխատարը 32կվտ | հատ | 2 | 5 |
| 2 | Օդի ներածման ագրեգատի կոմպլեկտ L-2000Մ3/ժամ | կ-տ | 1 | 5 |
| 3 | Կենտրոնախույս օդափոխիչ L-2000մ3/ժամ, P250ՊԱ | կ-տ | 1 | 2 |
| 4 | Կանալային օդամուղ L2000 Մ3/ժամ P-250պա | կ-տ | 1 | 2 |
| 5 | Պոմպային տեղակայանք /ղեկավարման բլոկով, ճնշման ռելեյով և ճնշումային հիդրոբաքով,Q=2մ3/ժ    H=15մ/ | կ-տ | 1 | 3 |
| 6 | Կոյուղու մաքրման կայան 6,0-7,0 մ3/օր | կ-տ | 1 | 2 |
| 7 | Ծավալային ջերմափոխանակիչ էլեկտրական ջեռուցիչով, V=300լ | կ-տ | 1 | 2 |
| 8 | Տակառիկ պոմպ Sololilt 2CWC3 Q-1,6լ/վրկ, H-5մ N-0,7կվտ n2800պտ/րոպպե | կ-տ | 1 | 2 |
| 9 | Փոխարկի չեռաբևեռ  160Ա/ապահովող անջատումը բեռի տակ/ | կ-տ | 1 | 2 |
| 10 | Փոխարկի չեռաբևեռ  100Ա/ապահովող անջատումը բեռի տակ/ | կ-տ | 1 | 2 |

Աղյուսակ N 2

| հ/հ | Նախագծանախահաշվային փաստաթղթերով նախատեսված նյութեր և սարքավորումներ | Նվազագույն շահագործման ժամկետ/տարի/ |
|---|---|---|
| | Ճարտարապետաշինարարական նյութեր | |
| 1 | սրբատաշ բազալտե սալեր 30մմ | 15 |
| 2 | դիզայներական գունավոր քարեր | 15 |
| 3 | տուֆե սալեր 30մմ | 15 |
| 4 | քսուկային բիտումային ջրամեկուսացում | 30 |
| 5 | ջերմամեկուսացում բազալտե մանրաթելային սալերով 50մմ | 30 |
| 6 | գոլորշամամեկուսիչ իզոգամ | 10 |
| 7 | յուղաներկ | 5 |
| 8 | լատեքսային ներկ | 5 |
| 9 | գիպսաստվարաթղթե ջրակայուն սալեր | 15 |
| 10 | հախճասալ | 15 |
| 11 | մամլոգրանիտ | 20 |
| 12 | խեցեսալ | 20 |
| 13 | Վինիլային | 10 |
| 14 | Լամինատ | 5 |
| 15 | Ալյումինե դռներ, երկշերտ ապակեփաթեթով, շրջանակը՝ ալյումինե պրոֆիլ ջերմահաղորդականությունը նվազեցնող շերտով, ներքեւի մասը ջերմամեկուսիչ շերտով սենդվիչ | 5 |
| 16 | ալյումինե ջերմային կամրջակով լուսամուտներ, վիտրաժներ /ներառյալ ապակեպատումը ջերմախնայող ապակեփաթեթով 4+4մմ, սարքերը/ | 5 |
| 17 | Փայտյա հենակմախքով ՄԴՖ երեսապատումով դռներ /խուլ եւ ապակեպատ/ | 5 |
| 18 | հրակայուն դռներ, վիտրաժներ /ներառյալ հակահրդեհային ապակեփաթեթը ծխաանթափանց, սարքերը, կողպեքը Անտիպանիկ/ EIWS 60 | 10 |
| 19 | Ալյումինե պատուհաններ, երկշերտ ապակեփաթեթով, շրջանակը՝ ալյումինե պրոֆիլ ջերմահաղորդականությունը նվազեցնող շերտով | 5 |
| 20 | ներկված անփայլ տրամատավոր ցինկապատ մետաղաթիթեղ | 15 |
| 21 | ներկված ցինկապատ հարթ թիթեղ | 15 |
| | Ջերմատեխնիկական, օդափոխության նյութեր և պատրաստվածքներ | |
| 1 | ջեռուցման մարտկոցներ /ներառյալ օդահանը, կախիչները եւ խցանը/ | 15 |
| 2 | ավտոմատացված ջրատաքացուցիչ կաթսա | 10 |
| 3 | շրջանառու պոմպեր | 10 |
| 4 | Օդի ներածման ագրեգատ | 15 |
| 5 | Օդամղիչ կանակային | 10 |
| 6 | գազի ազդանշանային սարք | 5 |
| | Էլեկտրատեխնիկական նյութեր և պատրաստվածքներ | |
| 1 | մուտքային բաշխիչ սաքավորում | 15 |

| | | |
|---|---|---|
| 2 | բաշխիչ վահան անհրաժեշտ սարքերով | 15 |
| 3 | լուսատուներ LED լամպով | 5 |
| 4 | եռաֆազ բազմասակագնային էլեկտրահաշվիչներ | 10 |
| 5 | արկղ իջեցնող տրանսֆորմատորով | 10 |
| 6 | Ավտոմատ միաբևեռ և եռաբևեռ անջատիչներ | 10 |
| 7 | Ղեկավարման հսկման համակարգ | 10 |
| 8 | պահուստային սնուցման աղբյուր | 3 |
| 9 | մարտկոց | 3 |
| 10 | ծխային ազդասարք | 3 |

| Հ/Հ | Նախագծանախահաշվային փաստաթղթերով նախատեսված նյութեր և սարքավորումներ | Նախագծողի կողմից սահմանված նվազագույն շահագործման ժամկետ /տարի/ |
|---|---|---|
| 1 | 2 | 3 |
| | **Ճարտարապետաշինարարական նյութեր** | |
| 1 | Շենքի կրող կոնստրուկցիաներ | 50 |
| 2 | Ալյումինե, ապակեփաթեթով, ջերմակամրջակով, մուգ մոխրագույն RAL-7011 արտաքին դռներ | 5 |
| 3 | Ալյումինե, խուլ, ջերմակամրջակով, ջերմամեկուսացված, մուգ մոխրագույն RAL-7011 արտաքին դռներ | 5 |
| 4 | Ալյումինե, ապակեփաթեթով, ջերմակամուրջով, մուգ մոխրագույն RAL-7011 արտաքին վիտրաժներ | 5 |
| 5 | Ալյումինե, ապակեփաթեթով, մուգ մոխրագույն RAL-7011 ներքին վիտրաժներ | 5 |
| 6 | Ներքին, երկգույնանի, մեկփեղկանի դռներ՝շրջանակը հոծ պլաստիկից, փեղկի հիմնակմախքը ջրակայուն շերտով փայտից, միջուկը պենոպոլիստիրոլ, երեսապատման շերտը 1,5մմ հաստությամբ ՊՎՔ | 5 |
| 7 | Ներքին, երկգույնանի, երկփեղկանի դռներ՝շրջանակը հոծ պլաստիկից, փեղկի հիմնակմախքը ջրակայուն շերտով փայտից, միջուկը պենոպոլիստիրոլ, երեսապատման շերտը 1,5մմ հաստությամբ | 5 |
| 8 | Մետաղական, խուլ, դռներ նկուղի | 5 |
| 9 | Ալյումինե, ապակեպատ, մուգ մոխրագույն RAL-7011 դռներ | 5 |
| 10 | Սանհանգույցի խցիկների դռներ և էկրաններ | 5 |
| 11 | Մետաղապլաստե, մուգ մոխրագույն RAL-7011, պրոֆիլի հաստ. 60մմ, եռաշերտ ապակեփաթեթով, 4 խցիկանի պատուհաններ | 5 |
| 12 | Ալյումինե, ապակեփաթեթով, առանց ջերմակամրջակի, մուգ մոխրագույն RAL-7011 ներքին վիտրաժ | 5 |
| 13 | Ջրամեկուսիչ շերտ հիդրոիզոլից 1 շերտ. բիտումի մածիկի վրայով | 10 |

| | | |
|---|---|---|
| 14 | Գլորշամեկուսիչ շերտ | 10 |
| 15 | Ծածկի ջերմամեկուսացում 100մմ հաստ. բազալտե մանրաթելային սալերով (80-90կգ/խմ խտությամբ) | 50 |
| 16 | Գլանափաթեթավոր, բիտումա-պոլիմերային "СБС " մոդիֆիկացված նյութից ջրամեկուսիչ թաղանթ, պրայմերի քսումով | 10 |
| 17 | Պատերի ջերմամեկուսացում արտաքինից 100մմ հաստ. երկշերտ, չայրվող բազալտե մանրաթելային սալերով (արտաքին շերտը 30մմ հաստ. 80կգ/խմ, ներքին շերտը 70մմ հաստ. 37կգ/խմ) | 50 |
| 18 | Ցոկոլի ջերմամեկուսացում 50մմ հաստ. չայրվող բազալտե մանրաթելային սալերով | 50 |
| 19 | Բազալտե սալեր 30մմ հաստ. | 5 |
| 20 | Ֆիբրացեմենտե սալե 8մմ հաստությամբ, ներկված գործարանային պայմաններում ջերմամշակմամբ, առանց ասբոցեմենտային հավելումի | 5 |
| 21 | Հետերոգեն վինիլային հատակ՝ հաստությունը 2մմ, պաշտպանիչ շերտը՝ 0,7մմ, 1քմ-ի քաշը ոչ պակաս քան 3կգ, ջրադիսպերսիոն նախաներկումով, 3-4մմ հաստ. ինքնահարթեցվող հատակի պատրաստումով, սոսնձումով | 5 |
| 22 | Հետերոգեն սպորտային վինիլային հատակ, հաստությունը 4,5մմ, պաշտպանիչ շերտը 1,0մմ, 1քմ-ի քաշը ոչ պակաս քան 3,2կգ, սոսնձումով, 3-4մմ հաստ. ինքնահարթեցվող հատակի պատրաստումով, սոսնձումով: Շրիշակները ՊՎՔ վինիլային նյութից ինքնակպչուն | 5 |
| 23 | Կավրոլինից 4,5մմ հաստ. (պաշտպանիչ շերտով, դասը 33, 1քմ քաշը 1,5կգ, ձայնամեկուսացումը 22դեցիբել, 100% PA) ծածկույթի իրականացում, ինքնահարթեցվող շերտի պատրաստումով և սոսնձումով | 5 |
| 24 | Լատեքսային ներկ | 5 |
| | **Սանտեխնիկական, ջերմատեխնիկական նյութեր և պատրաստվածքներ** | |
| 25 | Ռադիատոր ալյումինե Q=130.9վտ h=500 | 5 |
| 26 | Ռադիատոր ալյումինե Q=99.3 Վտ h=350 | 5 |
| 27 | Ընդարձակիչ անոթ թաղանթային V=80L, Φ480մմ, H=730մմ | 1 |
| 28 | Զուգարանակոնք հատակին տեղադրվող, լվացման բաքով | 1 |
| 29 | Լվացարան կերամիկական,550x450մմ չափսի (խառնիչով և ամրացման պարագաներով) | 1 |
| | **Էլեկտրատեխնիկական նյութեր և պատրաստվածքներ** | |
| 30 | Բաշխիչ վահան պլաստիկ 36մոդուլի համար IP44 | 1 |
| 31 | Ավտոմատ անջատիչներ | 1 |
| 32 | Մագնիսային թողարկիչներ | 1 |
| 33 | Բաշխիչ վահան պլաստիկ 24մոդուլի համար IP44 | 1 |
| 34 | Առաստաղի LED լուսատու 33վտ IP20 3000-4000K | 1 |
| 35 | Լուսատու ներսարքվող կախովի առաստաղի մեջ 33վտ LED IP20 3000-4000K | 1 |

| | | |
|---|---|---|
| 36 | Լուսատու LED մետաղաճռպանին ամրացվող 150վտ IP20 | 1 |
| 37 | Առաստաղի LED լուսատու 24վտ IP20 գրատախակը լուսավորելու համար | 1 |
| 38 | Առաստաղի LED լուսատու 33վտ IP65 3000-4000K | 1 |
| 39 | Լուսատու ներսարքվող կախովի առաստաղի մեջ 15վտ LED IP44 3000-4000K | 1 |
| 40 | Առաստաղի LED լուսատու 18վտ IP65 3000-4000K | 1 |
| 41 | Լուսատու վթարային, ակումուլյատորային մարտկոցով LED 12վտ, ոչ մշտական ներգործության | 1 |
| 42 | Լուսատու ազդանանշանային "ԵԼՔ" ակումուլյատորային մարտկոցով մշտական ներգործության 12վտ IP40 | 1 |
| 43 | Լուսատու ազդանանշանային ակումուլյատորային մարտկոցով մշտական ներգործության | 1 |
| 44 | Լուսատու վթարային, ակումուլյատորային մարտկոցով LED 12վտ, ոչ մշտական ներգործության | 1 |
| 45 | Schirtec S-AM շանթարգիչ սարքի տեղադրում հենասյան վրա | 1 |
| 46 | Ընդունիչ հսկիչ սարք Рубеж -2ОП R3 | 1 |
| 47 | ԱԻՆ միանալու ավտոմատ զանգող սարք Контакт GSM-9 | 1 |
| 48 | Անխափան սնուցման սարք ИВЭПР 12/3,5 RS-R3 2х7 БР | 1 |
| 49 | Մարտկոց 12В7А | 1 |
| 50 | Հասցեային ծխի ազդասարք ИП 212-64 R3 | 1 |
| 51 | Հասցեային հրդեհի ձեռքի ազդարարիչ ИПР 513-11 R3 | 1 |
| 52 | Հասցեային լուսաձայնային ազդարար ОПОП 124-R3 R3 | 1 |
| 53 | Ծխի գծային ազդասարք ռեֆլեկտորով ИПДЛ-52СМД (ИП212-52СМД) | 1 |
| 54 | Հասցեային ծխի գծային ազդասարք ИПДЛ–264/1-50-R3 (ИП 212-264) | 1 |
| 55 | Հասցեային սարք АМП-4 R3 | 1 |
| 56 | Ինտերֆեյսի մոդուլ ИМ-1 R3 | 1 |
| 57 | Հասցեային շարժման ազդասարք ИО 40920-2 | 1 |
| 58 | Հասցեային մագնիսական կոնտակտ ИО 10220-2 | 1 |
| 59 | Պրոքսիմիթի քարտի ընթերցիչ Hikvision DS-K1802E | 1 |
| 60 | UTP մալուխ UTP Cat5e | 1 |
| 61 | PoE ցանցային կուտակիչ 16 մուտք 10/100ՄԲ + 2մուտք/ելք 1000ՄԲ | 1 |
| 62 | Ցանցային տեսագրող սարք 32 IP մուտք, 160Mbps Bit Rate Input Max (up to 32-ch IP video), 2 SATA interfaces, 380 1U case | 1 |
| 63 | Մոնիտոր LED 32" | 1 |
| 64 | Անխափան սնուցման սարք 2000VA USB control, Auto Shut Down, 4x IEC-320 C13 socket, AVR (pure sine wave), Battery life 3~5 years | 1 |
| 65 | UTP Cat5e մալուխ | 1 |

**ՊԱՏՎԻՐԱՏՈՒ**

---------------------------------

/ստորագրություն/
Կ.Տ

**ԿԱՏԱՐՈՂ**

---------------------------------

/ստորագրություն/
Կ.Տ